55. ՏԵՐՏԵՐԻ ՏՂԵՆ

Կէղնի տերտերը՝, ուրեն լե կնիկը՝ ու տղե մը. էդոնց մեկ հատ լե եղ կեր ու հ՝արտը՝։

Մեկ եղնով կցաներ զուր հ՝արտ տերտեր։ Կցանե. օր քաղելու ժամանակ կիգա, կբռնե էրկու-իրեկ իրղատ, կառնե կէրթա, օր ցորեն քաղե։

Օր կէրթա ցորեն քաղե, տղին կասե.—Տղա, լաո, գնա քու մոր ասե ղէն ճետ թըղ մորթե, էնե հերիսա, հ՝իդանք հ՝իրկուն ուտենք։

Տղեն կիգա կասե.—Իմ հեր կասե զէն եզ թըղ մորթե, էնե հերիսա, հ՝իրկուն հ՝իգան իրղտներ ուտեն։

Մերն կասե.— Հա՜յ հավար, հա՜յ մադաթ, մենք ու մեկ եզ ինք, զէն լե հ՝ելլենք մորթե՞նք։

Տղեն կասե.— Իմա՞լ էնիմ, իմ հերն հմալ ասեց։

Կբերե զարկե զեզ գետին, կմորթե։

Հ՝իրկուն տերտեր կթողե շուտ կիգա տուն, կասե.—Կնիկ, զճետ էփե՞ր իս։

Կնիկ կասե.—Ի՞նչ ճետ է։

Տերտերն կասե.—Զէ՞ տղի հետ ջուհաբ ենք էրի, թըղ զճետ մորթե, դնե հերիսա, հ՝իրկուն կիգան իրղտներ ուտեն։

Կնիկն կասե.—Տղեն էկավ, ասեց՝ զեզ թըղ մորթե, ես լե զեղն եմ մորթի։

Կքաշե զանթրոց, կընկնի տղի հ՝ետե։ Տղեն կփախնի, կէրթա դուրս, կընկնի հ՝ետև, չհասնի, հա՜յ-հա՜յ, զանթրոց կլոռտե։

Տղեն կվերցու զանթրոց ու կէրթա դրմ հ՝արտ։ Կիշքե օր իրղտներ ֆնդիեն կիգան, կասե.—Հ՝ու՞ր կէրթաք, դառցեք էրթանք հ՝արտ, տերտեր զէդա անթրոց վառեց, տվեց հ՝իս։ Ասեց. «Տար հասու իրղտներուն, ինչ խղար ցորեն օր քաղած են, թրղ վառեն, հ՝ելնեն հ՝իդան»։

— Հա՛յ հավար, հա՛յ մադաթ, էդ տերտեր ծուռ է, մենք հար էդա գահ հոգի հանեցինք, քաղինք, խորմեցինք, խրլրսանք, հմկա լե դնեք կրակ հ՝ինկ վառենք։

Տղեն կասե.—Ըպա ես ի՞նչ էնիմ, ես լե ասի, վրեն չէղավ։

Ախբր կհամոզե, իրղտներ կդնեն կրակ բարդոցի մեջ, ալաֆ կէլնի հ՝երկինք, կթորկեն, կիգան։ Կթորկեն կիգան, տերտրոջ դռնով օր կընցնեն, տերտեր կտեսնա, կասե.— Դո՞ր զգլուխ ձի կախեր եք կէրթաք, էկեք հաց կերեք, սորա գացեք։

Իրղտներ կասեն.—Ինչ սև հաց է, ինչ սև հալբաթ է, էդ ի՞նչ էր էրիր։

Տերտեր կասե.— Ինչ եմ էրի։

Կասեն.— Քու տղեն էկավ, անթրոց հանդ էր ձեռք, ասեց. «Տերտերն է ճամբի դիս, կասե. թրղ զցորեններ վառեն, հ՝ելնեն հ՝իդան»։ Ինչ էրինք, վրեն չկացանք, թողինք կրակ հ՝ինկ ու հ՝ելանք էկանք։

Տերտերն է, ջիվար, ձեռք դրեց ծոցկ ու մտավ ներս։

Մենք թողենք տերտերն հ՝ոդի, դառնանք վրր տղին։

Տերտրոջ տղեն է, գնաց, գտավ ճամբու հետ ուրեն էշրմ, հեծավ, գնաց։ Շատ գնաց, քիչ գնաց, տեսավ օր կնիկրմ սրսուր լաչին առեր է վրր գլխուն, դեղի ու դեղջրգի, զսողնակ փակեց, բալնիկ դրեց սողընծրկու վրեն ու զկուժ առավ, գնաց հ՝աղբուր։ Ասեց.—Մորքուր, մորքուր, ինչ կէղնի, հ՝էսօր տեխրմ իտաս ընծիկ ու իմ իշուն։

Կնիկն է, հերսոտավ, կոշդրկեց.—Դը ջանրմի, հ՝ուստե՞ն է տեխ։

Կնիկն օր գնաց, չէ տղեն տեսեր էր, կնիկ հ՝ուր էր դրի զբալնիկ, գնաց բացեց զդուռ, տարավ զէշ կապեց, ինկ լե նստավ իշու մսուր։ Բրլե զդուռ փակեր էր, մեկ լե զբալնիկ դրեր էր սողնի տակ։

Կնիկ դառցավ էկավ տուն, բացեց զդուռ, գնաց ներս։ Ճրագն օր կպավ, տղեն տեսավ զդուռ զարկին։ Կնիկ հ՝ելավ զդուռ բացեց. տղեն տեսավ օր մարդրմ տասմալ ձեռք լիք եմիջ, մտավ ներս. կնկա դոսթն էր։

Քիչրմ մանցին, մեկ լե զարկին. կնիկ էնդոր լե հ՝ելավ բացեց զդուռ։

Մեկ լե էկավ զարկեց զդուռ. կնիկ հ՝ելավ բացեց, բողչե մը հետն էր, առավ դրեց մեկ դին, իրեկն է թրման։

Տղեն նստուկ է մսրի գլուխ, կիշքե վրեն ուրանց։

Նստան կնիկ ու էրիկ մարդ, կերուխում կէնեն, մեկ լե իշքեց օր զդուռ զարկին։ Հ՝ելավ բացեց, էրիկն է, ջրրտուկեն կիգեր, թոջուկ, հալ-

վրներ էղեր է ջուր։ Բացեց, էկավ նստավ, ասեց.—Կնիկ, քիչըմ հաց բի ուտիմ։

Կնիկն ասեց.—Ինչ կա քու տուն օր բերեմ. քիչըմ թթու թան ու չոր հաց։

Հ՝ելավ բերեց, դրեց թթու թան ու չոր հաց էրկա հ՝առեշ, բրդեց ու առավ զդդալն, հընկավ վրեն։

Օր հ՝ընկավ վրեն, տղեն ներսեն քխկաց։

Մարդն ասեց.— Էն ո՞րն է։

Կնիկն ասեց.— Էն կարած պատանքն է, տղե մը էկավ, ասեց. «Մորքուր, մորքուր, հ՝էսօր տեխըմ տուր, սրթըրվենք ես ու իմ էշ»։ Ես ասի. «Տեխ չկա»։ Էկեր է, գողտվտեկ մտեր է ներս։

Մարդն ասեց.—Էն ո՞րն է, թըղ հ՝իգա հ՝ոդա, հաց ուտենք։

Տղեն ասեց.—Մենակ հ՝իգամ, չէ՞ հ՝ընկերով։

Մարդն ասեց.— Հ՝ընկերով արի։

Քաշեց զէշն ու էկավ, նստավ վըր քասին։

Քիչըմ օր կերան, տղեն զմեխ խըտեց իշուն, էշ փրորնգտաց։ Ասեց.— Թերմաշ, գտան բանդակ կբանցու։

Մարդն ասեց.— Ինչ կասե, օր կփոնգտա։

Տղեն ասեց.—Կասե, ֆլան տեխ խաբուրդա կա, հ՝ելի բի ուտենք։

Կնիկն գնաց, առավ զխաբուրդեն, առավ էկավ, դրեց էրկա ու տղի հ՝առեջ, կուշտ կերան։ Օր խաբուրդեն կերան, տղեն մեկ լե զմեխ խըտեց իշու փորու տակ։ Էշ փոնգտաց։

Մարդն ասեց.— Ի՞նչ կասե։

Ասեց.— Կասե. ֆլան տեխ գաթա կա, բի ուտենք։

Կնիկ գնաց զգաթեն լե բերեց։

Գաթեն օր կերան, տղեն մեկ լե մեխ խըտեց, էշ փոնգտաց։

Ասեց մարդ.—Ըստ հաղ ի՞նչ կասե։

Ասեց.— Կասե. շուր տաքցու, լից ըդա փեթրկներու մեջ։

Մարդն հ՝ելավ, շուտ բերեց խուրձըմ ցախ, քրփսեց թունդիր, զպղինձ դրեց վրեն։ Ծոցուց շուր, լցեց փեթրկներու մեջ, չէ՞ իրեկ դոսթ լե մտուկ են փեթկի մեջ։ Ձիրեկ լե խաշեց, դրեց գետին։

Լուսուն հ՝ելավ էրիկ, թողեց գնաց հ՝արտ ջրրտուկ կէներ։ Տուն մանցին տղեն ու կնիկ։

Հ՝ելավ կնիկն, ասեց.—Տղա, հրմեն հրմեն էրիր զէդա բան, հ՝ելի գիշերով, տար կորցու քանի չլուացեր է, չընկնենք փորձանք։

Տարավ զէն էրկուս թալեց ձորու մը մեջ, քար կուտոցեց վրեն, զէն մեկ լե հալվներով դրեց էն տեխ, թորկեց էկավ։

Կնիկն ասեց.—Կորցուցի՞ր։

Տղեն ասեց.— Հա՛։

Կնիկն հանեց բոլամա փարա տվեց տղին։ Տղեն թորկեց զուր էշ դուրս, գնաց էն ձորու մեջ, օր էն մեկի վրեն քար չըր լցի, հալվրներով դրեր էր ու թորկի էկի, կապեց վրը ուր իշուն։

Ջո՛, չո՛, քշեց ու գնաց։ Օր կապեց վրը իշուն, բերեց մեկ ձեռք խիարըմ տվեց, մեկ լե չախուն ու գնաց։ Գնաց գարու մը տակ, էշ թորկեց էդ տեղրանք, օր արծեր, գնաց հ'ընկավ հ'արտի մեջ։ Քաղվորներ բոռացին.— Տղա, էկո հանե զքո էշ հ'արտի մեջեն։

Տղեն ձեն չհ'աներ։ Քաղվորներ տեսան օր ձեն չհանե տղեն, քաշեցին զգերընդիք ուրանց ու էկան իշու գին։ Օր էկան, էշ խըռտավ, մարդ պատավ վրավեն։ Տղեն հ'ելավ ու քշեց քաղվորներու հ'առեջ ու զգոմփ դրեց գլուխ. «Վո՛ւյ-վավոլեր, դուք զիմ հեր սպանեցիք»։

Քաղվորներ ասին.—Ջանըմ, մենք մատ լե չընք տվեր ի քու հեր։

Տղեն ասեց.—Իմա՞լ չըք տվեր ի, էն գահ օր քաշեցիք զգերընդիք ձի էկաք, վախենելուն սիրտ պատռեր է, մեռի։ Չըք ավդընա, էդա մեկ ձեռք խիարն է, մեկ ձեռք լե չախուն է, կքեզվեր, կուտեր։

Ինչ կէնեն, կտեսնան օր տղի ձեռնեն յախա չկըռնան ազատին։ Կբերեն ուրանց մեջ բեշ կէնեն, տան գլուխ մեկ-մեկ բեռ ցորեն կբառնան, իտան տղի հ'առեջ ու քշին։

Օր կբառնան կիգան, ջուհաբ կիգա տերտերուն, թե՝ քու տղեն քարվանըմ բառցեր է, ինկ քարվընից հ'առեջ կիգա տուն։

Կասե մոր.— Նանե, հ'ելի պուտուկըմ խուս, պուտուկըմ լե ոսպով շորվա էփե, դնենք իրզտներու հ'առջև, ուտեն։

Կբերե զբեռներ կդարդկե, զեզներ կքաշե թավլեն, կկապե զչրվլներ, կըլնա ներս։

Կիգան նստին, հաց կուտին, օր կխըլըսին, պառկելու վախտ տղեն կվերցու կասե.—Տեսեք, որն օր մուռտըլեց ուր տակ, հանդե ըստ հաղ իմ մամ կմեռնի, կելնեմ զիմ մամու արունկ բռնեմ առնեմ ուրնե։

Վախ կընկնի քաբվընճոց սրտի մեջ, կպառկին քնին։ Օր կպառկին քնին, կես գիշեր կէղնի, կորեկե խուս ու ոսպ, կբերե մեկ-մեկ շերեփ, կըլնա էդոնց տակ։

Մեկ կիմնա, չէ՞ վախ սրտի մեջ ուրանց է, ձեռկ կիտա ուր տակ, կիշքե, օր ձեռներ առավ ք. .ի մեջ։ Կլըլկե զկշտի մարդ, կզարթեցու։

Կասե.— Հելի, տես չըս մուռտըլի վըր քզի։

Կէլնի, էն լե կզարկե զձեռք, կտեսնա օր մուռտըլեր է վրեն։

Էն լե զուր կշտին կիմցու, ինչ գլխուցավանք էնիք, քառսուն լե զիրարու կիմցուցեն, կտեսնան օր մուռտըլել ին զուրանց տակ։

Կէլնին գիշերով ու կփախնեն, կասեն՝ «Եզ լե ուտե զուր գլուխ, չվան լե, շուլ լեռ։

Իրիցու տղեն հ՚իմաց էր, կիշքեր։ Օր հ՚ելան փախան, կբոռա.— Կիդի բռնեք, էդոնք զիմ մամ լե սպանեցին։

Էնդոնք օր կփախնեն կէրթան, կբոռա հոր.—Տերտեր, ինչ կասես, ես քզիկ եզ մը մորթեցի ու էրկու-իրեկ բարդ խոտ էրեցի, էդա քզիկ քառսուն եզ ու քառսուն բեռ ցորեն, էլ ի՞նչ կուզիս։

Նոր կփրթնեն, կազադեն հ՚իրարուց։